# ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

***Հոդված* 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «հիփոթեքի» բառից հետո լրացնել «հետադարձ հիփոթեքի,» բառերը:

***Հոդված* 2.** Օրենքի 39-րդ հոդվածում լրացնել նոր 8-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«8? Սույն հոդվածի դրույթները կիրառելի են նաև հետադարձ հիփոթեքի պայմանագրից բխող գրավի իրավունքի նկատմամբ:»

***Հոդված* 3.** Օրենքի 41-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«1?1? Հետադարձ հիփոթեքի դադարման պետական գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 272?5-րդ հոդվածով

նախատեսված դադարման հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում։»

**Հոդված 4.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Հանրապետության նախագահի Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2025 թ?